Գործ թիվ ԵԴ/49310/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30.09.2022թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ. Ստեփանյանս, ծանոթանալով <<Նոբիլիս Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Նոբիլիս Գրուպ>> ՍՊԸ-ն 22.09.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2022թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

27.09.2022թ. թիվ հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

<<Նոբիլիս Գրուպ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2022թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**